

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ
ՉԱՐԵՆՑԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՄՐՑԱՐՇԱԿ ԸՆԴԴԵՄ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ,
www.antitrafficking.am ԿԱՅՔԻ
ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԹԱՐՄԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

www.antitrafficking.am կայքի ստեղծագործական մասի պահպանում և թարմացում, տեխնիկական մասի պահպանում և անվտանգության ապահովում:

Ծրագրի սկզբում «Արտ Սայթ» ՍՊԸ-ն համագործակցության համաձայնագիր է ստորագրել «Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» ՀԿ-ի հետ, նրան պատկանող www.antitrafficking.am ինտերնետային կայքի բովանդակային և տեխնիկական մասի պահպանման և թարմացման ապահովման համար: Համաձայնագիրը հնարավորություն է տվել www.antitrafficking.am կայքէջում իրականացնել ստորև թվարկված աշխատանքները՝

- Գրանցված դոմեյնային անվան պահպանության շարունակականության ապահովում:
- Հոսթինգային ծառայությունների մատուցում:
- Կայքէջի նպատակային տեղեկատվության թարմացում: Կայքի տեխնիկական սպասարկում և կառավարում:
- Նորագույն գործիքների ներդնում, որոնք կայքը դարձրել են ավելի արագ ներբեռնվող և մատչելի:
- Կայքի անվտանգության ապահովում և անվտանգության համակարգերի պարբերաբար թարմացում և տեղադրում:
- Կայքի բովանդակային թարմացում, օգտատերերի համար տեղեկատվության ստացման և գիտելիքների ստուգման նոր հնարավորությունների ավելացում:
- Վիճակագրական տվյալների տրամադրում՝ նոր այցելուների և իրազեկման ճանապարհների ընդլայնման համատեքստում:
- Բաժանորդագրված անձանց էլեկտրոնային հասցեների սպասարկում:
- Էջերի, ենթաէջերի ավելացում և համապատասխան տեղեկատվության ներմուծում:
- Կայքէջի նպատակային տեղեկատվության թարմացում: Հաշվետու ժամանակահատվածում կայքի «Նորություններ» բաժնում անդրադարձ է արվել Հայաստանում և աշխարհում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող միջոցառումներին: Մասնավորապես լուսաբանվել է ՀՀ թրաֆիքինգի դեմ պայքարի խորհրդի և նրան կից աշխատանքային խմբի բոլոր աշխատանքներին: Հատկապես օգտատերերի ուշադրության է ներկայացվել Թրաֆիքինգի և ստրկության դեմ պայքարի միջազգային օրերին: Լուսաբանվել է գործընկեր կազմակերպությունների գործունեությունը:
- «Face book» սոցիալական ցանցում բացված «Anti-Trafficking Information Platform» էջում տեղադրված են կայքի բոլոր նորությունները:
- Կայքի տեխնիկական սպասարկում և կառավարում: Հաշվետու ժամանակահատվածում անձնակազմի պրոֆեսիոնալ գործունեության շնորհիվ կայքը գործել է անխափան:
- Նորագույն գործիքների ներդնում, որոնք կայքը դարձրել են ավելի արագ ներբեռնվող և մատչելի: Կայքը ներկայումս ներբեռնվում նաև բջջային հեռախոսներով:
- Կայքի անվտանգության ապահովում և անվտանգության համակարգերի պարբերաբար թարմացում և տեղադրում: Քանի որ նախկինում եղել են փորձեր կայքը «կոտրելու» դրա համար ներկայումս կայքի անվտանգության ապահովումը ևս իրականացվում է ժամանակակից ծրագրերով:
- Կայքի բովանդակային թարմացում, օգտատերերի համար տեղեկատվության ստացման և գիտելիքների ստուգման նոր հնարավորությունների ավելացում: Կայքը հնարավորություն է ընձեռում օգտատերերին «on-line» ռեժիմում ստուգել սեփական գիտելիքները մարդկանց թրաֆիքինգի բնագավառում և ստանալ համապատասխան խորհրդատվություն:
- Վիճակագրական տվյալների տրամադրում՝ նոր այցելուների և իրազեկման ճանապարհների ընդլայնման համատեքստում: Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ իրականացված թարմ

հետազոտությունները և հաշվետվություններն անմիջապես տեղադրվում են կայքի «Հաշվետվություններ» բաժնում: Այս բաժնից հատկապես շատ են օգտվում լրագրողները իրենց նյութերը պատրաստելիս:

- Կայքի անզլերեն տարբերակը հայերենին զուգահեռ նույնպես թարմացվում է: Անզլերեն տարբերակից հատկապես օգտվում են միջազգային կառույցները՝ ինչպիսիք են «ԳՐԵՏԱ»-ն, ԱՄՆ պետքարտուղարության մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բյուրո: Այդ մասին նրանց ներկայացուցիչները նշել են հանդիպումների ժամանակ Հայաստանում տարեկան մոնիտորիգ իրականացնելիս:
- Ապահովված է նաև մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ աուդիո-վիզուալ նյութերի առկայությունը և դրանց պարբերաբար թարմացումը: Կայքում տեղադրված տեսանյութերը և լուսանկարները ակտիվ օգտագործվում են ներկայացումներ պատրաստողները, կուրսային և դիպլոմային աշխատանքներ կատարող ուսանողները և հատկապես լրագրողները:
- Բաժանորդագրված անձանց էլեկտրոնային հասցեների սպասարկում: Բաժանորդագրված օգտատերերը ավտոմատ ստանում են այն բոլոր նորությունները, որոնք տեղադրվում են կայքում: Ներկայումս կայքն ունի 225 բաժանորդ:
- Էջերի, ենթաէջերի ավելացում և համապատասխան տեղեկատվության ներմուծում: Քանի որ կայքը այնպես է նախագծված, որ հնարավորություն ունի դինամիկ զարգանալու, ուստի հետազոտությունների հիման վրա ավելացվել է նոր բաժին՝ «Հարց ու պատասխան»: Սա հնարավորություն է տալիս օգտատերերին հարց ուղղել կայքին և կարճ ժամանակ անց ստանալ պատասխան փորձագետներից:
- Կայքի այցելությունների քանակը և աշխարհագրությունը ընդլայնվել է:

II բաղադրիչը՝ ՀՀ 2017թ.-ի երիտասարդական մայրաքաղաք Չարենցավանի երիտասարդների՝ ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի իրազեկության բարձրացման մրցարշավի ստեղծագործական, տեխնիկական և կազմակերպչական մասերի ապահովում:

Ծրագրի այս բաղադրիչն ամբողջությամբ իրականացվել է ՀՀ 2017թ.-ի երիտասարդական մայրաքաղաք Չարենցավանում՝ մարդկանց թրաֆիքինգի, իրավունքների, միգրացիայի, կիրքեր անվտանգության և Չարենցավանի պատմամշակութային թեմաներով գիտելիքների փոխանցման միջոցով: Երիտասարդներին գիտելիքների փոխանցումը և իրազեկության բարձրացումը տեղի է ունեցել 2 մեթոդական մոտեցմամբ՝ դասընթացային և մրցախաղային:

Ծրագրային բաղադրիչների աշխատանքների հաջորդականությունը իրականացվել է ըստ նախօրոք պլանավորված ժամանակացույցի, բովանդակային հետևյալ զարգացումներով:

Ծրագրի II բաղադրիչն իրականացվեց 2 փուլով: Ծրագրի առաջին փուլում այցելությունների միջոցով նախ հետազոտվեց հնարավոր մասնակիցների դաշտը, որի արդյունքում առանձնացվեցին թիրախային խմբերը, ընտրվեցին դասընթացների փորձագետները, պատրաստվեց մասնակիցներին տրամադրվելիք թեմատիկ նյութերի և գրականության փաթեթները (ավելին այս հղումով՝ <https://goo.gl/ShQFxo>):

Առաջին փուլի հիմնական մասը՝ դասընթացն էր: Դասընթացի անցկացման համար ներգրավված փորձագետները՝ Իրինա Դավթյանը (միգրացիայի հարցերով փորձագետ), Լուսինե Սարգսյանը (Մարդու իրավունքների հարցերով փորձագետ), Դավիթ Թումասյանը (թրաֆիքինգի հարցերով փորձագետ) և Մարինե Հովակիմյանը (Չարենցավանի պատմամշակութային արժեքների փորձագետ) պատրաստեցին և ներկայացրին մարդկանց թրաֆիքինգի, իրավունքների, կիրքեր անվտանգության, միգրացիայի և Չարենցավանի պատմամշակութային արժեքների մասին ներկայացումներ ևս (տես հղումը՝ <https://goo.gl/ShQFxo>):

Դասընթացն անցկացվեց Չարենցավանի «Փոքր ու միջին ձեռնարկությունների» գրասենյակում: Դասընթացին մասնակցեց 25 երիտասարդ (մասնակիցների ցուցակը կցված է): Նախօրոք պատրաստված մարդկանց թրաֆիքինգի, իրավունքների, միգրացիայի, կիրքեր անվտանգության և Չարենցավանի պատմամշակութային արժեքների մասին ներկայացումների օգնությամբ փորձագետներ մատուցեցին նյութերը լսարանին՝ ապահովելով նաև դասընթացի ընթացքում

առաջադրած բոլոր հարցադրումների և խնդիրների հստակ պարզաբանումները, ինչպես նաև ուղղորդելով և մոտիվացնելով երիտասարդներին՝ վերոհիշյալ թեմաների վերաբերյալ ավելացնել գիտելիքները և իրազեկող օղակ հանդիսանալ թրաֆիքինգի դեմ պայքարում:

Դասընթացի ավարտից հետո մասնակիցները բաժանվեցին 5 թիմի, յուրաքանչյուրում՝ 4 հիմնական և 1 պահեստային խաղացողներով: Դասընթացի մասնակիցներին տրվեց երկու շաբաթ ժամանակ՝ ստացած նոր գիտելիքներն ամրապնդելու և առաջիկա խաղին պատրաստվելու համար:

Ծրագրի խաղային փուլի համար նախորոք մշակվել էր համակարգչային խաղի ալգորիթմը և խաղի ծրագիրը:

Խաղի անցկացման համար մշակված համակարգչային ծրագիրը բացառում էր մարդկային միջամտությունները խաղի արդյունքների վրա: Ծրագիրն այնպես էր գրված, որ խաղի ամբողջ ընթացքում յուրաքանչյուր մասնակից կարող էր տեսնել, թե որ հարցին ինչպես էր պատասխանել թիմը, որքան ժամանակ է ծախսել հարցին պատասխանելիս և ինչ կարգավիճակ ունի մրցակցային աղյուսակում: Խաղի օբյեկտիվությունն ապահովելու համար նախորոք մշակված ծրագիրը հնարավորություն էր տալիս ինչպես մասնակիցներին, այնպես էլ հանդիսատես-երկրպագուներին հետևել խաղին մեծ էկրանի վրա:

Փորձագետների կողմից կազմվեց ծրագրի խաղային մասի հարցաշարը: Ծրագրի կազմակերպիչները ճիշտ մոտեցում էին ցուցաբերել՝ հարցաշարը չսահմանափակելով միայն թրաֆիքինգի թեմայով, քանի որ միգրացիոն հոսքերը շատ են Կոտայքի մարզից, հարկ է գիտակցել հնարավոր խնդիրների, առկա վտանգների և դրանցից խուսափելու ճանապարհների մասին:

Պատրաստվեցին նաև խաղի անցկացման համար անհրաժեշտ պարագաները՝ մասնակիցների համար նախատեսված գլխարկներ և շապիկներ, որոնք խորհրդանշում էին հայոց եռագույնը:

Մայիսի 27-ին մեկնարկեց մրցակցային խաղը՝ Չարենցավանի քաղաքային գրադարանում:

Խաղի կազմակերպիչները մինչև մասնակիցների ժամանելը կարգավորել էին յուրաքանչյուր խմբին հատկացվելիք համակարգչի ծրագրային փաթեթը՝ բեռնելով թվային խաղի կանոնների, կարգավորումների, հաջորդական փուլերի մասին տեղեկատվություն: Թիմերը խաղին ներկայացան ՀՀ եռագույնը խորհրդանշող վերնահագուստով և գլխարկներով:

Խաղի անկողմնակալությունն ու անաչառությունն ակնհայտ էր, քանի որ համակարգչային ծրագիրը բացառում էր արդյունքների գրանցման, հաշման, վերջնահաշվարկի ոչ ստույգ կամ խոչնդոտող մարդկային գործոնները:

Խաղի ընթացակարգը հետևյալն էր. խաղավարի կողմից հնչում է հարցի նախապատմությունը, ապա՝ հարցը: Հարցի պատասխանի համար նախատեսված ժամանակի ընթացքում թիմը ընտրում է առաջարկված 4 հնարավոր պատասխաններից մեկը: Հատկանշական է, որ արդյունքների հաշվարկման ժամանակ դիտարկվում էին միանգամից երկու դրույթ. ճիշտ պատասխան և արագություն: Ելնելով խաղի կանոնակարգից՝ առաջին մրցանակային տեղ զբաղեցնում է այն թիմը, որն ամենակարճ ժամանակահատվածում հավաքում է ամենաշատ միավորներ:

Խաղին մասնակցած «Ազգ», «Ազգային ոգի», «Անտիթրաֆ», «Ազատություն» և «CanWill» անուններով թիմերը առողջ մրցակցության արդյունքում գրանցեցին ներքոնշյալ արդյունքները:

V տեղ-«Ազգային ոգի»-56 միավոր 630 վայրկյանում:

IV տեղ- «Ազգ»- 64 միավոր 627 վայրկյանում:

III մրցանակային տեղ- «Անտիթրաֆ»- 67 միավոր 666 վայրկյանում: Թիմի յուրաքանչյուր մասնակից պարզևատրվեց թվային/համակարգչային անլար մկնիկով:

II մրցանակային տեղ-«CanWill» -72 միավոր 637 վայրկյանում: Այս թիմի ներկայացուցիչները պարզևատրվեցին ժամանակակից և բազմաֆունկցիոնալ ռադիոընդունիչներով:

I հորիզոնականում էր «Ազատություն» թիմը, որը 441 վայրկյանում 77 միավոր վաստակեց: Թիմի ներկայացուցիչները պարզևատրվեցին կարաոկե սարքով և բարձրախոսներով (նվերներ ստացած մասնակիցների ցուցակը կցված է):

Հավելենք, որ յուրաքանչյուր թիմ ուներ իրեն ոգևորող երկրպագուների բանակ: Հանդիսատեսն ու ոգևորող երկրպագուները խաղին մասնակցում էին մրցող թիմերի անունները կրող և «Stop Human Trafficking» գրառմամբ պաստառներով: Ներկա էին նաև Չարենցավանի քաղաքային գրադարանի,

Չարենցավանի Ամերիկյան Անկյունի և Չարենցավանի երիտասարդական կազմակերպության աշխատակիցներ, կամավորներ, խաղի կազմակերպիչներ, ինչպես նաև պարզապես հետաքրքրասեր մարդիկ:

Դասընթացը և խաղը բաց էին բոլոր ցանկացողների համար: Դասընթացին և խաղին հրավիրված էին տեղական հասարակական կառույցների ներկայացուցիչներ, ուսանողներ և աշակերտներ:

Դասընթացի և խաղի ավարտին կային մարդիկ, ովքեր անկեղծորեն նշեցին, որ մինչ այս դասընթացը չգիտեին, որ Չարենցավանում մարդկանց թրաֆիքինգի դեպք է գրանցվել և իրենց գոհունակությունը հայտնեցին, որ մեր երկիրը, ինչպես նաև միջազգային մի շարք կառույցներ զգալի աշխատանքներ են իրականացնում այս չարիքի դեմ պայքարելու համար:

Խաղի ավարտից հետո մասնակիցները նշեցին, որ շատ են հավանել դասընթացի և խաղի միջոցով իրազեկման և գիտելիքների հարստացման վերոհիշյալ տարբերակը և հստակեցրին, որ տեղեկատվությունն այս կերպ ամրապնդելու մոտեցումը լավագույնս է ծառայում իր նպատակին: Երիտասարդները նաև արձանագրեցին խաղի անկողմնակալությունն ու անաչառությունը: Ոգևորված երիտասարդները փաստեցին նաև, որ ունենալով բավականաչափ տեղեկատվություն կարող են ոչ միայն խուսափել թրաֆիքինգ երևույթից, այլ նաև իրենց շրջապատող մարդկանց օգնել՝ լինել իրազեկ ու ապահով:

Դասընթացի ամփոփ անդրադարձ այս հղումով՝ <https://goo.gl/PL3BXM>
 Խաղի անդրադարձը՝ <https://goo.gl/2DexXH>

Ծրագրի և դասընթացային և խաղային բաղադրիչները լուսաբանվեցին և հրապարակվեցին www.antitrafficking.am և www.erit.am կայքերում: www.antitrafficking.am կայքէջում հայերեն և անգլերեն լեզուներով հրապարակվեց դասընթացի և խաղի մասին նյութերը, իսկ www.erit.am -ը՝ հայալեզու ամփոփ անդրաձայն կատարեց ամբողջ ծրագրին: Նյութերը առավել մեծ քանակի լուսանկարներով տեղադրվել է նաև Ֆեյսբուքյան “Anti-Trafficking Information Platform” էջում:

Ստորև տես նյութերի հղումները.

<https://goo.gl/AjEYKi>, <https://goo.gl/1viyxP>, <https://goo.gl/jwLDCt>, <https://goo.gl/DRWyVK>,
<https://goo.gl/xQCBTd>

Ծրագրի ֆինանսական կատարողական

N	Անվանումը	Նախահաշիվ	Կատարողական
1.	www.antitrafficking.am կայքի ստեղծագործական և տեխնիկական մասերի պահպանում և թարմացում	1 600 000	1 600 000
2.	Հայաստանի Հանրապետության 2017 թվականի երիտասարդական մայրաքաղաք Չարենցավանի երիտասարդների՝ ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի իրազեկության բարձրացման մրցարշավի ստեղծագործական, տեխնիկական և կազմակերպչական մասեր	4 062 000	4 062 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	5 622 000	5 622 000